

Գիտական խորհրդի նախագահ՝
[Ստորագրություն]
Հ. Վ. Թոքմաջյան



**ՇՈՒՇԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ
ՓՈՐՁԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ (ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ)
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն փաստաթղթով սահմանվում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ ՇՏՀ կամ Համալսարան) քաղաքականությունը մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և Համալսարանի կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բնագավառում, այդ քաղաքականության նպատակները, խնդիրները, իրականացման սկզբունքներն ու մեխանիզմները, գործընթացի էթիկայի նորմերը:

Այս ոլորտում ՇՏՀ-ն իր ռազմավարությամբ կարևորում է.

- ԱՀ, ՀՀ և միջազգային կրթական տարածքներում նշանակալի ձեռքբերումներ ցուցաբերած կրթական ծրագրերի բենչմարքինգը՝ Համալսարանի մրցակցային կարողությունների և բարձրորակ կրթության ապահովման, բարձրագույն մասնագիտական կրթության որակի գնահատման համար,
- բուհական գործունեության կազմակերպման և կառավարման (մենեջմենթի) խնդիրը՝ ուղղված ժամանակակից բուհերի հաջող կառավարման համար նորարարական (իննովացիոն) տեխնոլոգիաների փնտրմանը և կրթության որակի դիագնոստիկային՝ կրթական ծառայությունների բարելավման, մասնագիտական կրթության որակի բարձրացման և բուհի արդյունավետ կառավարման համար:

Համալսարանի քաղաքականությունը մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բնագավառում համահունչ է Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի 1.1 և 1.2 խնդիրներին:

Սույն քաղաքականության իրականացման համար պատասխանատու են Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի տեղակալը, ամբիոնի վարիչները, որակի ապահովման բաժնի վարիչը, ստորաբաժանումներում որակի ապահովման պատասխանատուները:

ԲԵՆՉՄԱՐՔԻՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բենչմարքինգի իրականացման նպատակներն են.

- 1) Հետազոտման միջոցով ապահովել Համալսարանի հաջողության հասնելու հավանականությունը և նրա շրջադարձային կամ շարունակական զարգացումը:
- 2) Համալսարանում նոր սկսվող կամ աջակցության կարիք ունեցող կրթական տարբեր գործընթացների, մասնավորապես, աշխատաշուկայում պահանջված մրցունակ կրթական ծրագրերի մշակման, վերանայման և մշտադիտարկման համար ուսումնասիրել և կիրառել բարձր վարկանիշ ունեցող, առաջատար բուհերի լավագույն փորձը:
- 3) Մշտապես ուսումնասիրել աշխատաշուկան, ստանալ տեղեկատվություն շահակիցների և գործատուների վերաբերյալ, բացահայտել սեփական թաքնված հնարավորությունները /ռեսուրսները/, լավացնել և կատարելագործել սեփական գործունեության արդյունքները, բարձրացնել համալսարանի մրցունակությունը:
- 4) Իրականացնել վերլուծություն, առանցքային և կատարողականի հիմնական ցուցիչների միջոցով գնահատել համալսարանի արդյունքները և ձեռքբերումները:
- 5) Անընդհատ վերլուծության շնորհիվ տեղեկացված լինել մրցակից ուսումնական հաստատությունների նվաճումներին և գործել ակտիվ,
- 6) Գնահատել Համալսարանի գործընթացները՝ սեփական ցուցանիշները համեմատելով ԱՀ և ՀՀ առաջատար ուսումնական հաստատությունների գործընթացների հետ և արդյունքների հիման վրա իրականացնել սեփական գործընթացների ռազմավարական պլանավորում:
- 7) Հիմնավորել ուրիշներից լավը սովորելու, սեփականը գնահատելու և արժևորելու գործընթացները:
- 8) Ներդնել նոր գաղափարներ ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպման, այնպես էլ այլ կրթական ծառայությունների կառավարման գործընթացներում:

ԲԵՆՉՄԱՐՔԻՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բենչմարքինգի իրականացման խնդիրներն են.

- 1) Վերլուծելով և գնահատել Համալսարանում իրականացվող տարբեր գործընթացների ուժեղ և թույլ կողմերը, որոշել այն նախնական աստիճանը, որի վրա գտնվում է համալսարանը:

2) Հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների ակնկալիքները՝ առանձնացնել բարելավման ենթակա գործընթացները, պարզելել բացթողումները այդ գործընթացներում, գնահատել դրանց հետևանքները:

3) Որպես բենչմարք ընտրված ուսումնական հաստատությունների և մրցակիցների մասին հավաքագրել տեղեկատվություն, առանձնացնել նրանցից լավագույններին և արդյունավետության բարձրացման նրանց փորձը:

4) Վերլուծելով առաջատար բուհերի բենչմարքինգի արդյունքների տեղայնացման հնարավորությունները՝ ապահովել նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումը Համալսարանի ուսումնական և կառավարման գործընթացներում:

5) Ձեռք բերած արդյունքները դարձնել ելակետային նոր բենչմարքինգի իրականացման համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Բենչմարքինգի քաղաքականության իրականացման սկզբունքներն են.

1) **Փոխհամաձայնություն:** Բենչմարքինգ իրականացնելիս ունենալ փաստացի կամ լրելյայն համաձայնություն տրամադրվող տեղեկատվության սահմանների և հրապարակայնության աստիճանի վերաբերյալ:

2) **Նույնականություն:** Համեմատել նույն ոլորտները և գործընթացները:

3) **Չափում:** Լավագույն փորձն ընտրել մի քանի բուհերի արդյունքների համեմատության միջոցով:

4) **Հավաստիություն:** Բենչմարքինգը հիմնավորել փաստերով և կոնկրետ վերլուծություններով:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՇՏՀ-ի բենչմարքինգի քաղաքականության իրականացման մեխանիզմներն են.

1) Սեփական գործունեության ինքնավերլուծություն:

2) SWOT վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում բուհի ուսումնական, մեթոդական, գիտական, կազմակերպչական գործունեության կառավարման բնագավառում, բուհի ստորաբաժանումների գործունեության համադրում, վերլուծում և գնահատում (ներքին բենչմարքինգ),

3) Էտալոնային (մրցակցային կամ առաջատար) բուհի փնտրում, որում Համալսարանին հետաքրքրող գործընթացներն իրականացվում են բարձր մակարդակով, այդ բուհի համապատասխան գործընթացների վերաբերյալ տվյալների հավաքագրում,

4) Համալսարանի և էտալոնային բուհի առանցքային ցուցանիշների համադրում, վերլուծություն, եզրակացությունների ամրագրում, լավագույն փորձի ներդրում,

5) Սեփական գործընթացների համեմատական վերլուծության համար էտալոնային բուհի նույն գործընթացների գնահատման համարժեք ցուցիչների օգտագործում՝ ճշմարտացիության և հուսալիության մեջ համոզված լինելու համար,

6) Համալսարանի և համագործակցող բուհերի միջև կառավարման և ուսումնական գործընթացների արդյունավետ վերլուծության մշակույթի ձևավորում, փոխադարձ վստահության և համաձայնության մթնոլորտում, հանդիպումների, քննարկումների և ֆոկուս խմբերի միջոցով:

7) Սեփական նվաճումները գովազդելու և հրապարակելու համար PR-ի շահավետ լծակների նպատակային կիրառում:

ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԿԱՆԱՑՄԱՆ ԷԹԻԿԱՆ

ՇՏՀ կարևորում է էթիկայի կանոնների պահպանումը բենչմարքինգի իրականացման գործընթացում և պարտավորվում է ապահովել.

1) **Լեգիտիմություն:** Բենչմարքինգ անցկացնել միայն նախնական համաձայնության դեպքում (փաստաթղթավորված կամ լուրջաբան): Խուսափել այնպիսի գործողություններից կամ հարցերից, որոնք մրցակցության տեսանկյունից ձեռնադրու չեն որևէ կողմի համար:

2) **Տեղեկատվության փոխանակման պատրաստակամություն:** Անհրաժեշտության դեպքում տրամադրել ցանկացած ոչ կոնֆիդենցիալ /ոչ գաղտնի/ տեղեկատվություն բենչմարքինգ իրականացնող այլ հաստատություններին:


3) **Վստահություն:** Ստացված տեղեկատվությունը չհաղորդել երրորդ կողմին՝ առանց նախնական համաձայնեցման: Բենչմարքինգի ընթացքում ստացված տեղեկատվությունը օգտագործել միայն սեփական հայեցակարգերի և աշխատանքի մեթոդների բարելավման համար:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

ՇՏՀ շահագրգռված է արդյունավետ բենչմարքինգի իրականացման և փորձի փոխանակման համար: Համալսարանը գիտակցում է, որ բենչմարքինգը առաջին հերթին սեփական ցուցանիշների համեմատումն է այլ առաջատար, մրցակից հաստատությունների ցուցանիշների հետ, երկրորդ՝ ուրիշ հաստատությունների լավագույն փորձի ուսումնասիրումն ու կիրառումն է սեփական հաստատությունում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գիտական քարտուղար՝



Հ.Վ.Թոքմաջյան

Ա.Ա.Առաքելյան